ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/9.1

քսանը ապրիլի 2012 թվականի

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ>> ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. <Երևանի պետական համալսարանի աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների մասին կանոնակարգում (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2008թ. փետրվարի 14-ի նիստում) (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

   1.1 Կանոնակարգի 2-րդ կետի 2.2 ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

   <2.2. Արտասահմանյան գործուղման ժամկետի երկարաձգումը պետք է իրականացվի ԵՊՀ ռեկտորի հրամանով՝ գործուղվածի դիմումի, հրավերի, գործուղման ընթացքում կատարած աշխատանքի հաշվետվության, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, և ընդունող հաստատության ներկայացուցչի կողմից վերոնշյալ հաշվետվության դրական կարծիքի առկայության դեպքում:>:

   1.2 Կանոնակարգի 3-րդ կետի 3.1 ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

   <3.1 Գործուղման մեջ գտնվելու ընթացքում ԵՊՀ գիտաշխատողի աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, նրա աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը պետք է երկարացվի մինչև գործուղում մեկնելը:>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ